ՊԱՉՈՏՆՈՒ ՏՐՏՈՒՆՋԸ

Առաջ մեր գյուղում պաչոտնի մարդը
Իսկի չէր քաշում գյուղական դարդը,
Ո՛չ խարջ էր տալիս, ո՛չ մասրափ գիտեր,
Խարջի ավելն էլ դեռ ինքը կուտեր։
5 Ա՜խ, ինչպես լավ էր,
Էն վախտ Շուլավեր։

Շրջվել է հիմի դարը հակառակ,
Պաչոտնի մարդն էլ ընկավ խարջի տակ,
Աստված վե՞ր կունի – պաչոտնի ու խա՞րջ,
10 Ո՞վ էր իմացել էս բանը առաջ –
Ա՜խ, առաջ լավ էր,
Ափսո՜ս Շուլավեր։

Պաչոտնու եզը, գոմեշը թե ձին
Թեկուզ հենց քանդեր քյասիբի այգին,
15 Ո՞վ կհամարձակեր պահանջել տուգանք –
Այնքան ունեինք պատիվ ու հարգանք –
Ա՜խ, ինչպես լավ էր,
<Էն վախտ Շուլավեր։>

Հիմի թե հորթ է, պատահի այնպես,
20 Ընկնի մի հիմար աղքատի պարտեզ.
– Հե՛յ, ինչո՞ւ մարդին տալիս ես վնաս,
Դե՛, սի՛րտ, դու սրան ի՞նչպես դիմանաս –
Ա՜խ, էս ինչ ցավ էր,
<Ափսո՜ս Շուլավեր։>

25 Ամեն մարդ իրան գյուղյումն էր պահում
Գինի էր առնում իր փողի շահում,

Մեծ էր թե ինչ որ – այն էր գյուգյումը,
Ո՞վ դեմ կըխոսեր – թեկուզ մտքումը –
Ա՜խ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր։>

Հիմի աղքատի – հարուստի համար
Բերել են մի չափ շինել հավասար,
Վրան էլ գեղի պեչատն են զարկել,
Պետք է նրանով շիրա հավաքել։
էս ինչ նոր ցավ էր –
<Ափսո՜ս Շուլավեր։>

Գեղի քյասիբին պապական ծեսով
Փող էինք տալիս 60 տոկոսով –
Դեռ խեղդում էինք պարտքերի տակին
Եվ հետո խլում տունը կամ այգին –
Ա՜խ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր։>

Ասում են հիմի զակոն է եկել,
Որ այս տեսակ բան թե անենք մեկ էլ՝
Վինավաթ կըլնենք ու Սիբիր կերթանք.
Հապա էլ ինչո՞վ անենք աշխատանք –
Ա՜խ, էս ինչ ցավ էր –
<Ափսո՜ս Շուլավեր։>

Ախ, մի ժամանակ մեր ամբողջ գյուղը
Գիտեր պաչոտնու ահն ու երկյուղը –
Գիտեր, որ մենակ պաչոտնին էր մարդ,
Մյուսները նրան կամ ծառա, կամ պարտ.
Ա՜խ, ինչպես լավ էր,
<էն վախտ Շուլավեր։>

Հիմի, Տեր Աստված, այս ինչ է դառել,
Աղքատ և գյադա լեզու են առել,
Խոսում են, վիճում, դատում, պահանջում –
Պաշոտնու հարգը էլ չեն ճանաչում –
Ա՜խ, էս ինչ ցավ էր,
<Ափսո՜ս Շուլավեր։>

Առաջ ժամանակ ամեն պաշտոնում
Պաշոտնի մարդ էր ընտրված լինում
Հարուստ ու դիրքով, մազով ու միրքով –
Գործն էլ տանում էր պաշոտնու կարգով.
Ա՜խ, ինչպես լավ էր,
<Էն վախտ Շուլավեր։>

Էնպես վախտի ենք հիմի պատահել –
Նոր ձվից ելած ամեն մի ջահել,
Որ գլխին ճերմակ մի մազ չունի դեռ
Դառնում է գեղի սուդիա-տանուտեր –
Ա՜խ, էս ինչ ցավ էր,
<Ափսո՜ս Շուլավեր։>